

Հաւատացելոց, այն է Հռոմայ Քահանայապետը, քրիստոսի փոխանորդը եւ Յաջորդը Պետրոսի, որուն ըսուած է՝ Արածեա զոչխարս իմ, Մենք, ի Տէր մեծ ուրախութեան մէջ ընկղմած, զՔեզ, եւ այն ամէնքն՝ որ Քեզի նոյնպէս համամիտ են, հայրական սրտիւ պիտի ընդգրկենք: Եւ որպէս զի Քեզի ճամբան ընդարձակենք, որով Աստուծոյ օրհնութեամբը նոյնն ի գլուխ հանել կարենաս, այստեղ կը ներփակենք տպագրեալ ձեւ մը, որուն մէջ Սուրբ եւ կաթողիկէ հաւատոյ կէտերը բովանդակուած են, որ տարբեր չէ անկէ զոր Ս. Պետրոս եւ Առաքեալք ուսուցին եւ Հռոմէական Եկեղեցին ի սկզբանէ անտի ներկայացուց ամէն հաւատացելոց ի պահպանութիւն: Եւ կը յորդորենք զՔեզ, եւ ծայրագոյն սիրով կը պաղատինք, որ եթէ Քու եւ քուկիններուդ փրկութիւնը կը սիրես, եւ ծանրութեամբ կը փնտռես, չդանդաղիս Քու ստորագրութիւնդ, որ ոչ այնչափ գրչով որչափ սրտիւ գրուած ըլլայ, այս ձեւին տակ դնելու, եւ նոյնն այսպէս ստորագրեալ Մեզի զրկես եռանդեամբ, եւ յետոյ անոր մէջ բովանդակուած ճշմարտութեան քարոզ եւ ուսուցիչ ըլլալ ուզես այդ ժողովուրդեան: Այս Քու ջանիցդ մէջ Քեզի սիրով աջակից կ'ըլլան Միսիոնարներ, եւ այն՝ այն խոնարհութեամբ եւ առ Քեզ ամենայն յարգութեամբ, որ ինչ վայելէ. վասն զի անոնք լաւ գիտեն՝ թէ Մեր իղձն է որ կաթողիկէ կրօնի պաշտամունքն այն տեղերու մէջ աճի առանց Քու Արժանաւորութեան փխսելու: Եւ